ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 16 08.04.2014թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-31-Ի ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԾԻՐԱՆԵՆՈՒ ԲԵՐՔԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զեկուցողը ներկայացրեց ,որ մարտի 30-31-ին տեղի ունեցած ցրտահարության հետևանքով Արարատի մարզի Սուրենավան համայնքում կատարվել է ուսումնասիրություն,որի արդյունքում պարզվել է .որ ամբողջովին ցրտահարվել է 261,8հա բերքատու ծիրանենու այգիներ,որոնց սեփականատերերն են 184 ֆերմերներ:Առաջարկվեց ներկայացնել ցուցակ ֆերմերների անունների և տարածքների վերաբերյալ և տեղեկատվությունը ներկայացնել Արարատի մարզպետարնի համապատասխան վարչություն,ուստի Սուրենավան համայնքի ավագանին **որոշում է.**

2014թ. մարտի 30-31ին տեղի ունեցած ցրտահարության հետևանքով տուժված բերքատու ծիրանենու այգիների վերաբերյալ ստացված ուսումնասիրությունները ,այն է 261,8 հա ,որոնք պատկանում են 184 ֆերմերների ,համապատասխան տեղեկատվությամբ ներկայացնել Արարատի մարզպետարան կից ներկայացնելով ցուցակը:

Կողմ- դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Ադամյան

Ա. Շահվերդյան

Կ. Մարտիրոսյան

Ա. Նուրիջանյան

Ա.Աբրահամյան

Ա. Մուսախանյան

Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Կ. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 17 08.04.2014թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ Սուրենավան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող հողերը առանձնացնելու և մրցույթի կարգով վարձակալությամբ տալու:

Մերձարաքսյան գոտուց.

Լոտ 1 ծածկագիր 03-086-201-ից 0,45818 հա այլ հող

Լոտ 2 ծածկագիր 03-086-201-ից 0,7969 հա այլ հող

Լոտ 3 ծածկագիր 03-086-200-ից 0,06487 հա վարելահող 5-րդ կարգ

Լոտ 4 ծածկագիր 03-086-202-ից 0,79216 հա այլ հող

Լոտ 5 ծածկագիր 03-086-202-ից 0,3382 հա այլ հող

Լոտ 6 ծածկագիր 03-086-196-ից 0,5603 հա այլ հող

Լոտ 7 ծածկագիր 03-086-201-ից 0,45419 հա այլ հող

Ընդամենը -3.4648 հա

2.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով մրցույթով վարձակալությամբ տրվող հողամասի մեկնարկային վարձավճարը սահմանել հողամասի զուտ եկամտի 22 % :
3.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելով նպատակով մրցույթով վարձակալությամբ տրվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա,իսկ առավելագույնը սահմանել 20,0 հա, ինչպես նաև առանձին հողամասերի համար հիմք ընդունել ՀՀ կառավարության կողմից հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում ընդունված չափերը:

Կողմ- դեմ-0 ձեռնպահ -0

Պ. Ադամյան

Ա. Շահվերդյան

Կ. Մարտիրոսյան

Ա. Նուրիջանյան

Ա.Աբրահամյան

Ա. Մուսախանյան

Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար Գ. Կարապետյան